ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
( ՀՀՎՊԾՀԾՁԲ-15/1)

ք. Երևան 29.12.2016 թ.

«ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա.Ներսիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և ,Ղ-Տելեկոմ ՓԲԸ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի, (այսուհետ՝Կատարող) մյուս կողմից, (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետային կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կֆիքսվի 2017թ.համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով,որի գինը կներառի Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է յուրաքանչյուր եռամսյակ, անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կկատարվի հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.1 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված

գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան տվյալ տարվա յորաքանչյուր եռամսյակի վերջին շաբաթում.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն

ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Սույն պայմանագիրը լուծվում է,եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆին. միջոցներ չեն նախատեսվում:**

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համապատասխան պայմանագիր:*

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ

պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ | <Ղ-Տելեկոմ>ՓԲԸ |
| ք. Երևան, Բաղրամյան 19 | ք. Երևան, Արգիշտի 4/1 |
| ԿԳ գործառնական վարչություն | Արդշինբանկ ՓԲԸ |
| հհ 900011545069 | ՀՀ 2470113333300000 |
| ՀՎՀՀ 00061508 | ՀՎՀՀ 01551651 |
| Աշխատակազմի ղեկավար | Գլխավոր տնօրեն |
| Ա. Ներսիսյան | Գ. Ցիրիկյան |

## Տեխնիկական բնութագիր- Գնման ժամանակացույց

| N | Ինտերնետային կապի | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | տեսակը | Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով |
| 2 | միացման նախապայմանները | Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում |
| | | Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում *(Երևանի և մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին* |
| | | Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային մալուխի անցկացում մինչև<br>օգտվողի կողմից նշված կետը<br>*(Երևանի և մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին)* |
| 3 | Երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային<br>հանգույցի և օգտվողի միջև (1:1 օգտագործմանգործակցով) | Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով՝ 75 Մբիթ/վրկ |
| 4 | Երաշխավորված թողունակություն օպերատորի ցանցում (1:1 օգտագործման գործակցով) | **100 Մբիթ/վրկ (կապ երկու մասնաշենքերի միջև և 22 ֆինանսների նախարարության հետ՝ Մելիք Ադամյան 1** |
| 5 | սպասարկման նախապայմանները | Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով, ըստ կապի պատվիրված<br>արագության, երաշխավորված երկկողմ սիմետրիկ կապի արագություն<br>(22 և 22 տարածքից դուրս այցելած կայքերի համար) |
| 6 | Այլ պահանջներ | Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն՝ ապահովելով<br>համարժեք արագագործությունը, հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում |
| | | Լիցենզավորված մանագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն և Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում |
| | | Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն, Ծառայության հետ կապված ծրագրային ապահովում |
| | | Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական<br>Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով) |
| | | Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում՝ վաճառքի կամ վարձակալության հիմունքով |
| | | Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում՝ ըստ պահանջի |
| | | Անհրաժեշտության դեպքում օգտվողի կողմից << տարածքից դուրս այցելած հանգույցների<br>վերծանման տրամադրում: |
| | | Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում՝ պատվիրատուի<br>համակարգչային մասնագետին |
| | | Վարդանանց փակուղի 8 հասցեից Բաղրամյան 19 կապուղու (թունելային) տրամադրում |
| 7 | լրացուցիչ ծառայություններ | էլեկտրոնային փոստի տրամադրում (պահանջվող քանակով փոստարկղերի տրամադրում)«.am» տիրույթում ենթատիրույթի գրանցում և պահպանում |
| | ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՐ | |
| | Սկիզբը՝10.01.2017թ | Ավարտը՝30.12.2017թ. |

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հհ 900011545069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Ներսիսյան

ԿԱՏԱՐՈՂ
<Ղ-Տելեկոմ>ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտի 4/1
Արդշինբանկ ՓԲԸ
ՀՀ 2470113333300000
ՀՎՀՀ 01551651
Գլխավոր տնօրեն

Ռ. Յիրիկյան

Հավելված 1/1
30.12.2կնքված ՀՀՎՊ-ԾՁԲԾՁԲ-15/1
ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ.րա ժինը | Ծառայության | | | Նախատեսվում է գնել 2017 թ. | | | | | | | | | | Ամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման որը | Միա վորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | Ընդամենը | | | |
| | | | | քանակը | գինը | քանա | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քան | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 9 | 10 | | | | 14 |
| 1 | Ինտերնետ կապ ծառայություններ ի մատուցման | դրամ | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | --- | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | -- | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | -- | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | -- | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | -- | 750 (օպերատորի ցանցում) Մբիթ/վրկ | |
| Ընդամենը | | | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | | 75 և 100 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | | 750 (օպերատորի ցանցում)Մբիթ/վրկ | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար
Ա. Ներսիսյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտի 4/1
Արդշինբանկ ՓԲԸ
ՀՀ 2470113333380000
ՀՎՀՀ 01551651
Գլխավոր տնօրեն
Ռ. Յիրիկյան

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման կարգը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն